# ԵՐԵՔ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ՀՈՎ. 1.11-28

*11 Իրանների մէջ եկաւ, եւ իրանները նորան չընդունեցին: 12 Սակայն նրանց, ովքեր ընդունեցին*
*նրան և հավատացին նրա անվանը, իշխանություն տվեց Աստծու որդիները լինելու: 13 Նրանք*
*չծնվեցին արյունից, ո՛չ էլ մարմնի ու մարդու կամքից, այլ ծնվեցին Աստծուց:*

## I. ԱՌԱՋԻՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱ ՀՈԳՈՒ ՎԵՐԱԾՆՈՒՆԴՆ Է:

*Ժող. 3.11 – Նա ամեն բան արել է վայելուչ իր ժամանակին, նաեւ յաւիտենականութիւնը դրել է մարդկանց սրտումը.*

- *Հիսուսն ասաց, եթե մարդը վերստին չծնվի չի կարող տեսնել Աստծո արքայությունը (Հովհ. 3.3):*
- *Եթե մարդը ջրից և Հոգուց չծնվի, չի կարող մտնել Աստծո թագավորությունը: (Հովհ. 3.5):*
- *Մարմնից ծնվածը մարմին է, Հոգուց ծնվածը հոգի (Հովհ. 3.4,6):*

- ***Սուրբ Հոգին մեզ մկրտեց քրիստոսի մարմնի մեջ: Նա մեզ դրեց Քրիստոսի ձեռքերի մեջ:***

***Օրինակ:*** *երեխան մոր որովայնում ապրում է ջրի մեջ և սնունդ է առնում իր մորից ու ճանաչում է իր մոր ձայնը:*

*Աստված մեր Փրկիչը, իր քաղցրությունն ու մարդասիրությունը հայտնեց և փրկեց ոչ թե մեր կատարած արդար գործերի համար, այլ պարզապես իր ողորմած լինելու համար:* ***Նոր ծնունդ տվեց մեզ մկրտությամբ և Սուրբ Հոգու միջոցով վերանորոգեց մեզ (Տիտոս 3.3-4):***

*Գաղ. 3.27 - Վասնզի ամենքդ՝ որ Քրիստոսում մկրտվեցիք, Քրիստոսին հագած էք:*

*Եփ. 5.26 - Որ նորան սրբացնէ՝ մաքրելով ջրի ավազանովը՝ խօսքի միջոցով.*

*29 Հաջորդ օրը Հովհաննեսը տեսավ Հիսուսին, որ գալիս էր իր մոտ, ու ասաց.* ***Ահա Աստծու***
***Գառը, որ իր վրա է վերցնում աշխարհի մեղքը:*** *30 Սա է, որի մասին ես ասում էի. "Ինձանից*
*հետո գալիս է մեկը, որ ինձանից մեծ է, որովհետև նա կար ինձանից առաջ: 31 Ես չէի ճանաչում*
*նրան: Սակայն որպեսզի նա հայտնի լինի Իսրայելին, դրա համար եկա ջրով մկրտելու:*

## II. ՋՐԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՔՈ ՎԵՐԱԾՆՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆ Է:

### *Ինչո՞ւ մկրտվել*

- ***Որովհետև ուզում ես հետևել Քրիստոսի օրինակին:***

*Մար. 1:9 - Եւ եղաւ այն օրերը՝ որ Յիսուսը եկաւ Գալիլեացիների Նազարէթիցը, եւ մկրտուեցաւ Յովհաննէսիցը Յորդանանի մէջ:*

*Հռ. 6.4,5 – 4 Մկրտությամբ նրա հետ թաղվեցինք մահի մեջ, որպեսզի ինչպես Քրիստոսը մեռելներից Հոր փառքով հարություն առավ, այնպես էլ մենք նոր կյանքով ընթանանք: 5 Որովհետև եթե նրա մահվան նմանությամբ նրա հետ միացանք, ապա նրա հարությամբ նույնը կլինենք:*

- ***Որովհետև Քրիստոսն է դա պատվիրել:***

  *Մատ. 28.19-20 - Ուրեմն գնացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, **նորանց մկրտելով** Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով.*

- ***Ո՞վ պետք է մկրտվի***

  ***Ցանկացած անձնավորություն, որ որոշում է կայացրել հավատալ Քրիստոսին, պետք է մկրտվի:***

  *Եվ նրանք, որ ուրախությամբ ընդունեցին նրա խոսքերը, մկրտվեցին: Եվ այդ օրը նրանք երեք հազար հոգով ավելացան Գործք 2.41*

  *Բայց երբ հավատացին Փիլիպպոսին, որն Աստծու արքայության և Հիսուս Քրիստոսի անվան մասին էր ավետարանում, բոլորն էլ մկրտվում էին՝ թե՛ տղամարդ, թե՛ կին (Գործք 8.12):*

  *ներքինին ասաց. Ահա ջուր. ի՞նչն է ինձ արգելում, որ մկրտվեմ (Գործք 8.36):*

  *Այդ ժամանակ Պետրոսն ասաց. Ո՞վ կարող է արգելել, որ սրանք մկրտվեն ջրով, որոնք ընդունեցին Սուրբ Հոգին, ինչպես և մենք (Գործք. 10.47):*

  *Գիշերվա նույն ժամին նրանց տարավ, վերքերը լվաց, և իսկույն մկրտվեցին ինքը և բոլոր յուրայինները (Գործք 16.33):*

## III. ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԽՈՍՏՈՒՄԸ (ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ) ՔՐԻՍՏՈՍԻ ՈՒՍՄՈՒՆՔՆ Է:

*32 Եվ Հովհաննեսը վկայեց ու ասաց. Տեսնում էի Հոգին, որ աղավնու պես իջնում էր երկնքից և հանգչում նրա վրա: 33 Ես նրան չէի ճանաչում, բայց նա, ով ինձ ուղարկեց ջրով մկրտելու, ինձ ասաց. "Ում վրա տեսնես, որ Հոգին իջնում է ու մնում, նա՛ է Սուրբ Հոգով մկրտողը": 34 Ու ես տեսա և վկայեցի, թե՝ "Սա է Աստծու Որդին":*

- ***Մար. 16.15-16 - Նրանք, ովքեր հավատում են, հայտնի կլինեն հետևյալ նշաններով.***

  1. *Իմ անունով չար ոգիներ պիտի հանեն,*
  2. *Նոր լեզուներով պիտի խոսեն,*
  3. *Ձեռքով օձ պիտի բռնեն առանց խայթվելու (Ծննդոց 3.14-15),*
  4. *Եվ եթե մահացու որև է թույն էլ խմեն, չպիտի վնասվեն,*
  5. *Հիվանդների վրա ձեռք պիտի դնեն և բժշկեն նրանց:*

- *Մար. 16.20 - Եվ նրանց քարոզչությունը հաստատվում էր իրենց տրված բոլոր նշաններով, որ ուղեկցում էին իրենց: Ամեն:*

## Ի՞ՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ